

գրական, գործօնական, մարտական իր երեսներով ինֆ-
զինվել կը պարտադրել իմ մտքին) ֆանի մը ամուր գիծեր
հոգիէ եւ մտքէ, ու այդ առիթով ֆանի մը համապատ-
կերները (tableau synoptique) այդ ժողովուրդի հաւաքական
ապրումներուն: Անշուշտ ծանր աշխատանք է ասիկա, տըր-
ւած ըլլալով մէկ հատիկ մարդու զգայնութեանց գումարը,
կազմուած այնքան զանազան բաժիններէ:

«Մնացորդաց»ի Գ. հատորը՝ «Դժոխք», յոյս չունիմ,
որ ըլլայ նուանելի այլեւս նուաղած իմ ուժերէն: Իր կէսին
մէջ կտրուած, կործանած այդ գործին հսկայ առֆն է սա-
կայն, որ դեռ կը յամառի ու կը մղէ զիս, գէթ հատուածակի՝
իմ պարտքին վնասման:

Մաթիկ Մելիքիսանեանը ցանկցայ անձնապէս, կեանքի
գրեթէ սեմին, ինչպէս կ'ըսեն:

Իր ընկերոջ հետ, ան ըրաւ ինծի հետ իր հանդիպումը
իբր յեղափոխական անանկ օրերու, ուր այս բառը լսող
ականջներն իսկ դատապարտելի էին մահուան: Մեր ժո-
ղովուրդը – հոս՝ նկատի ունիմ պոլսամերձ շրջաններու
հայութիւնը – կարծես, այս դարուն սկիզբը մեղքը կը ֆաւեր
չարդուած չըլլալու: Անոր գլխուն յօրինուած էին պայ-
մաններ, որոնց չէին մտածած հին ու նոր յաղթական ժողո-
վուրդները իրենց գերիներուն համար: Պէտք չէ սխալ կշռել
տարողութիւնը սա հաւաստումին: Մենք չենք պարծենար
չունեցած ազատութեան մը սնոտի, մուրացկան փառֆովը:
Բայց կը ուղեմ ուրիշ ստուգութիւններ, ինչ որ 1900ը ը-
րաւ ամենէն անարգ, տխուր գերութիւնը մեր պատմութեան,
բացատրելի է թրքական բռնութենէն աւելի մեր հոգիին բա-
ցառիկ մէկ բարեխառնութեամբը: Կը հասկնայինք, որ գե-
րիներ էինք: Բայց ողբերգութիւնը հո՛ն էր, որ կորսնցուցած
էինք գերութեան իմաստը, զգայարանքը, նման չըլլալով
մեր պապերուն, որոնք կը հասկնային գերութիւնը, երբ
իրենք չէին ընդուներ իրենց գերի ըլլալը, ֆանի որ հո-
գիներուն խորը, շքեղ՝ կը կազմուէր իրենց ցեղային գերա-
զանցութեան պատգամը: Յետոյ չէինք հասկնար աւելի
տարրական ուղիարտութիւններ: Մեր հոգին, պոլսամերձ